ֆայի, Ղարապաղարը 62 վերստ է ի Կաֆայէ, սոյն մէջոցին ի Սուղդա ևս բաղմացել են հայկաղունք. այնպէս որ ըստ յիշատակարանիս, ի դաշտս և ի լերինս լցուցել են շէնքերով։ « Յայնժամ զօրացաք մեք և բազմացաք և շինեցաք զգիւղս և զգաւառս այսինքն միանալով արդէն ի Կաֆա, ի Սուրբաթ և ի Սուղդա հինէն բնակող ազգայնոց հետ։ Եթէ այս ենթադրութիւնը չլինի, յայնժամ բառը բոլորովին անյարմար և անտեղի պէտք է համարել, զի անդէն ի թերակղզիս մտնալնուն պէս, իսկոյն բազմանալն և զօրանալն անկարելի է։ « Շինեցաք « տունք հարիւր հազար, և զեկեղեցիս հազար, և « ի ահէ հոնականաց պարսպեցին ի քաղաքն Ֆէօ« դոսիա »։

Նոր եկող հայկազանց առանձին տեղի բնակութեան կամ թաղ որոշուած է, և հաւանական կ'երևի, որ ուխտի կամ դաշանց գրին մէջ, դեսպանաց Հայոց ընդ իշխանին Կաֆայի, այս ևս պայման դրուած է որ, Հայք պարսպեն իրենց թաղը, ընդդէմ հասարակաց թշնամեաց, այն է Թաթարաց զորս յիշատակարանս կը շփոթէ Հոնաց հետ։ Այս պարիսպը, քաղաքիս արևելեան ծայրը շինուած Ֆռէնկհիսար կոչուած Գենուացի պարսպէն կցելով, ընդ հարաւ լեռներուն վրայէն հասուցել են Հայք մինչև ցհիւսիսային ծայր քաղաքին, որով քաղաքին հարաւային մասը՝ լերանց ելևէջներով, եղած է թաղ հայոց։ Այդ մասին մէջն են ցարդ ևս կանգուն մնացած ԺԲ—Դ դարը շինուած չորս հայոց եկեղեցիք, այլ շատերը հիմնայատակ կործանել են։ Այլ որովհետև բիւրաւոր գաղթականք այդ փոքր սահմանին մէջ կարող չէին ամփոփուիլ, այնպէս կը համարիմք, որ յիշատակարանիս մէջը յիշուած